

Թիւ 26716  
Փետրուար 21, 1980

Արժանաշնորհ

Տ. Գառնիկ Քհնյ. Հալլանեան  
Հովհան Ս. Խաչ Եկեղեցւոյ  
Նախազան ծիական Խորհուրդի  
Եռւնիքն Սիթի.

Սիրելի Տէր Գառնիկ,

Ասացած ենք Փետրուար 8, 1980 թուակիր մեր տեղեկագիրը, որով կը հաղորդէր թէ մեր նախազանութեամբ Յունուար 27ին գումարուած համայնքիդ ծիական ֆողովին մէջ կատարուած է ծիական Խորհուրդի հինգ անդամոց ընարութիւնը, եւ ներկայացնելով ցուէարկութեան արդիւնքը՝ կը ինդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը։

Այսու գիրով կը վաւերացնենք ծիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին։

Համեցէք փուլով Առաջնորդարան դրկել ծիական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւները։

Օրհնելով ծիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք մեզի եւ մեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին։

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Հարըլտ Ազմէլ եան  
Ֆիլիփ Արքիարեան  
Հարէզ Գուգունեան  
Հարէզ Կէնճեան  
Հաւէն Ցովսէփեան